



**Վերինտեգրման հարցերով
Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ
Պետական միջգերատեսչական հանձնաժողով**

**Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման
ազգային հայեցակարգի և գործնական պլանի կատարման
2010 թվականի հաշվետվություն**

2010 թվականի հունվար - դեկտեմբեր

Ներածություն

Վրաստանի կառավարության 2009 թվականի մայիսի 8-ի №348 կարգադրությամբ¹ հաստատվեց **„Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը և 2009-2014 թթ. գործնական պլանը»**²: Այս ակտի համաձայն, **վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմին**³ հանձնարարվեց մշակել և համակարգել ազգային փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականությունը, ինչպես նաև ամեն տարվա դեկտեմբեր ամսին **Վրաստանի կառավարությանը և նախագահին առընթեր գործող խորհրդին**⁴ ներկայացնել հաշվետվություն: Այս գործընթացները համակարգված իրականացնելու նպատակով, Վրաստանի փոխվարչապետի, վերինտեգրման հարցերով պետական նախարարի 2009 թվականի հուլիսի 3-ի №14 հրամանի⁵ հիման վրա ստեղծվեց **պետական միջգերատեսչական հանձնաժողով**⁶:

Հանձնաժողովի կազմի մեջ մտան ինչպես վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի ղեկավարությունը և պատասխանատու աշխատակիցներ, այնպես էլ համապատասխան պետական հիմնարկությունների, նախարարությունների, գերատեսչությունների և կազմակերպությունների, ինչպես նաև Թբիլիսիի Սակրեբուլոյի և ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների երեք երկրամասային ադմինիստրացիաների ներկայացուցիչներ.

- ❖ *Վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմ*
- ❖ *Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ*
- ❖ *Մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարություն*
- ❖ *Աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարություն*
- ❖ *Տարածաշրջանային զարգացման և ենթակառույցի նախարարություն*
- ❖ *Արդարադատության նախարարություն*
- ❖ *Սպորտի և երիտասարդության գործերով նախարարություն*
- ❖ *Կրթության և գիտության նախարարություն*
- ❖ *Ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոն*
- ❖ *Քննությունների ազգային կենտրոն*
- ❖ *Կենտրոնական ընտրական հանձնաժողով*

¹ http://www.smr.gov.ge/uploads/file/gankarguleba%20%23348_080509.pdf

² <http://www.smr.gov.ge/uploads/file/geo.pdf>

³ <http://www.smr.gov.ge/ge/home>

⁴ <http://diversity.ge/geo/resources.php?coi=0|12|13|13>

⁵ http://www.smr.gov.ge/uploads/file/brdzaneba%20%2314_03_07_09.pdf ;

http://www.smr.gov.ge/uploads/file/brdzaneba%20%237_22_03_10.pdf

⁶ <http://www.smr.gov.ge/uploads/file/IAC-sia-rekvizitebi.pdf>

- ❖ *Ժողովրդական պաշտպանի աշխատակազմ*
- ❖ *Հանրային հեռարձակում*
- ❖ *«Հազարամյակի մարտահրավեր Վրաստանին» հիմնադրամ*
- ❖ *Թբիլիսիի Սակրեբուլո*
- ❖ *Քվեմո-Քարթլիի երկրամասում պետական լիազոր-նահանգապետի ադմինիստրացիա*
- ❖ *Սամցխե-Ջավախեթի երկրամասում պետական լիազոր-նահանգապետի ադմինիստրացիա*
- ❖ *Կախեթի երկրամասում պետական լիազոր-նահանգապետի ադմինիստրացիա*

Հանձնաժողովը արդյունավետ կերպով համագործակցում է Վրաստանի խորհրդարանի համապատասխան կոմիտեի հետ⁷, տեղական ինքնակառավարման մարմինների, ժողովրդական պաշտպանի աշխատակազմի և հանդուրժողականության կենտրոնի հետ⁸, Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի հետ⁹, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների հետ: Հանձնաժողովը սիստեմատիկաբար վարում է նիստեր տարբեր թեմատիկ օրակարգով:

«Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի» նպատակների, սկզբունքների և մոտեցումների գործադրման նպատակով, Վրաստանի կառավարական հիմնարկությունների (նախարարությունների և տարբեր հանրային իրավունքի իրավաբանական դեմքերի), ինչպես նաև ք. Թբիլիսիի քաղաքապետարանի և Սակրեբուլոյի, նաև երկրի այլ երեք տարածաշրջանների՝ Քվեմո Քարթլիի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի երկրամասային ադմինիստրացիաների և այս տարածաշրջանների մունիցիպալիտետների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակվեց **2010 թվականի մանրամասն գործնական պլան**¹⁰:

Հատկանշական է, որ ներկայացված **2010 թվականին ծավալած գործունեությունն** արտացոլող համալիր հաշվետվությունը¹¹ մշակվել է պետական միջգերատեսչական հանձնաժողովի անդամների¹² և վերինտեգրման հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի¹³ միասնական աշխատանքային խմբի ինտենսիվ գործունեության արդյունքում:

⁷ http://www.parliament.ge/index.php?sec_id=252&lang_id=GEO

⁸ <http://ombudsman.ge/index.php?page=63&lang=0>

⁹ <http://www.nplg.gov.ge/>

¹⁰ http://smr.gov.ge/ge/ethnic_monorities/history_-_տեսեք_այս_կայք-էջի_վերջին_բլոկը

¹¹ http://www.smr.gov.ge/uploads/2010_Annual_Report_ge.pdf

¹² <http://www.smr.gov.ge/uploads/file/IAC-sia-rekvizitebi.pdf>

¹³ http://smr.gov.ge/ge/ethnic_monorities/documents/doc1

Ինչպես 2010 թվականի գործնական պլանը, այնպես էլ տարեկան հաշվետվությունը կազմելիս, ինչպես նաև տարվա գործնական պլանով նախատեսված միջոցառումների կազմակերպչական և ֆինանսական ապահովմամբ, Վրաստանի իշխանությանը ակտիվորեն աջակցում էր երեք միջազգային ծրագիր.

- ✚ «Վրաստանի ազգային ինտեգրման և հանդուրժողականության ծրագիրը¹⁴» - Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիա (UNA Georgia¹⁵), ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID¹⁶)
- ✚ «Դանիայի՝ Վրաստանի ծրագիր 2010-2013 դատարանային բարեփոխման, մարդու և փոքրամասնությունների իրավունքների օժանդակություն» - փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոն (ECMI¹⁷), Եվրոպայի խորհուրդ (Council of Europe¹⁸), Դանիայի կառավարություն (Ministry of Foreign Affairs of Denmark¹⁹)
- ✚ «Վրաստանի ժողովրդական պաշտպանի գրասենյակի օժանդակություն²⁰» - ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (UNDP Georgia²¹):

¹⁴ <http://diversity.ge/geo/aboutrcg.php>

¹⁵ <http://www.una.ge/geo/>

¹⁶ <http://georgia.usaid.gov/index.php?m=2&lang=geo>

¹⁷ <http://ecmcaucasus.org/>

¹⁸ <http://www.coe.int/> ; <http://portal.coe.ge/>

¹⁹ <http://www.um.dk/en>

²⁰ http://undp.org.ge/index.php?lang_id=GEO&sec_id=40&pr_id=73

²¹ http://undp.org.ge/index.php?sec_id=1&lang_id=GEO

Ազգային հայեցակարգի ուղղություն №1: Օրենքի գերակայություն

Գերակա խնդիր 1.2: Ազգային փոքրամասնությունների համար արդարադատության համակարգի մատչելիության բարելավում

Այն բանի համար, որպեսզի ազգային փոքրամասնությունները կարողանան իրականացնել իրենց սահմանադրական իրավունքները, և պետական լեզվի չիմացությունը չդառնա արդարադատության համակարգի մատչելիությանը խոչընդոտող հանգամանք, վերինտեգրման նախարարությունը հիմնական օրենսդրական ակտերը թարգմանեց և հրատարակեց ազգային փոքրամասնությունների լեզուներով՝ ադրբեջաներեն, հայերեն և ռուսերեն: Թարգմանության տպագիր տարբերակը տարածվեց փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում, իսկ էլեկտրոնային տարբերակը հասանելի է վերինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի պաշտոնական կայք-էջում http://smr.gov.ge/ethnic_monorities/documents/national, ինչպես նաև <http://diversity.ge/geo/>, որոնք համատեղ ստեղծել են նախագահին առընթեր գործող ներողամտության և քաղաքացիական ինտեգրման խորհուրդը և ՄԱԿ-ի ասոցիացիան:

Արդարադատության նախարարությունը, վերինտեգրման նախարարությունը և նախագահին առընթեր գործող խորհուրդը կանոնավորապես վարում են հանդիպումներ ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի հետ, որտեղ իշխանության ներկայացուցիչները պարզաբանում են օրենսդրական կարգավորումները և քննարկում են այս կամ այն տարածաշրջանին բնութագրական հիմնադրույթային հարցերը:

Բնակչության գրանցում և իրավական խորհրդատվություն.

2010 թվականին, *քաղաքացիական ռեեստրի գործակալության, «Իրավական զարգացման և խորհրդատվությունների խումբ» ոչկառավարական կազմակերպության, ՄԱԿ-ի՝ տարհանվածների գործերով գերագույն կոմիսարիատի²² (UNHCR) և Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամի²³ (UNICEF) փոխհամագործակցությամբ իրականացվեցին հետևյալ նախագծերը. «Վրաստանում քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանություն և կրճատում», «Բռնի տեղաշարժված անձանց փաստաթղթավորում», «Տարհանվածների գրանցում և նատուրալիզացիա (բնականացում) նրանց սոցիալական սպասարկման*

²² <http://www.ungeorgia.ge/eng/UNHCR.php>

²³ <http://www.unicef.org/georgia/>

(սերվիսի) և պաշտպանության մատչելիությունը բարելավելու համար» և «Բնակչության գրանցում և նատուրալիզացիա նրանց սոցիալական սպասարկման և պաշտպանության մատչելիությունը բարելավելու համար»: Վերոնշյալ նախագծերի հիմնական նպատակ էր ներկայացնում Վրաստանի տարածքում բնակվող անձանց, այդ թվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների շրջանում, փաստաթղթեր չունեցող անձանց բացահայտումը և իրավական օգնության ցուցաբերումը:

«Տարհանվածների գրանցում և նատուրալիզացիա՝ նրանց սոցիալական սպասարկման և պաշտպանության մատչելիությունը բարելավելու համար» նախագծի նպատակ էր ներկայացնում Ախմետայի մունիցիպալիտետում բնակվող, Ռուսաստանի Դաշնությունից հարկադրաբար տեղաշարժված ազգությամբ չեչեն անձանց նատուրալիզացիան (բնականացումը): Նախագծի ընթացքում 2010 թվականին նույնականացվել է 163 բենեֆիցիար, որոնցից 41-ին տրվել է Վրաստանի քաղաքացիություն, իսկ 122 բենեֆիցիարի գործ գտնվում է վարույթում:

«Բնակչության գրանցում և բնականացում՝ նրանց սոցիալական սպասարկման և պաշտպանության մատչելիությունը բարելավելու համար» իրականացված նախագծում, որի նպատակը ներկայացնում է նաև փաստաթղթեր չունեցող բնակչության նույնականացում և իրավական օգնություն Վրաստանի տարածաշրջաններում, բացահայտվել է փաստաթուղթ չունեցող 5232 բենեֆիցիար, դրանցից 1140 ազգային փոքրամասնության ներկայացուցիչ անձ: Նախագծի ընթանալու ժամանակաշրջանում 317 բենեֆիցիարի ցուցաբերվեց իրավական օգնություն:

Գերակա խնդիր №1.3: Խտրական վերաբերմունքից ազգային փոքրամասնությունների արդյունավետ պաշտպանության ապահովում

Այն բանի համար, որպեսզի կատարվի խտրական վերաբերմունքից ազգային փոքրամասնությունների արդյունավետ պաշտպանության ապահովում անհրաժեշտ է, որ նրանք իրազեկված լինեն սեփական իրավունքների և ազատությունների մասին: Այս նպատակով հրատարակվեցին և տարածվեցին հետևյալ ժողովածուները.

- ✓ *«Ազգային փոքրամասնությունների իրավունքների ռեզլամենտարային նորմերը միջազգային իրավունքում և Վրաստանի ազգային օրենսդրությունում» (USAID/UNAG ծրագրի ֆինանսավորմամբ),*
- ✓ *«Վրաստանի օրենսդրությունը ազգային փոքրամասնությունների մասին՝ վրացերեն, ադրբեջաներեն, հայերեն և ռուսերեն լեզուներով» (CoE/ECMI ծրագրի ֆինանսավորմամբ):*

*Հասարակությանը կողմնորոշված դատախազի ընթացակարգ*²⁴ նպատակ է հետապնդում Վրաստանի գլխավոր դատախազության²⁴ և շրջանային դատախազությունների հաշվետվության և թափանցիկության մակարդակի աճ, ինչպես նաև դատախազների կողմից, հասարակության պահանջների և հիմնախնդիրների մասին լրատվության ստացում առաջին աղբյուրից և հնարավորությունների շրջանակներում այս պահանջներին և/կամ հիմնախնդիրներին արձագանքում, դատախազի նկատմամբ, հասարակության վստահության ձեռքբերում և/կամ բարձրացում: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում անչափահասներին և այլ նպատակային խմբերին օրենքի գերակայության, գործող օրենսդրության և օրենսդրական նորույթների մասին լրատվություն հաղորդելուն, ինչը ապահովում է օրինահնազանդության ցուցանիշի ավելացում և հանցանքի կատարման կանխարգելում:

Ներկայումս, հասարակական դատախազության նախագծեր իրականացվում են դատախազության 15 տարածաշրջանային գրասենյակներում, այդ թվում Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում, Թբիլիսիում, Մցխեթայում, Ախալցխիում, Ջեստափոնում, Օզուրգեթում և Շուախևում: Ներկայացված նախագծերը հիմնականում ուղղված են այլընտրական միջոցներ ձեռնարկելու ճանապարհով հասարակությունում հանցագործությունների կրճատմանը, ինչպես նաև խտրական վերաբերմունքի կանխարգելմանը: Հասարակական դատախազության շրջանակներում, Վրաստանի դատախազությունը իրականացրել է բազմաթիվ նշանակալից միջոցառումներ ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում:

Գերակա խնդիր №1.4: Հանրային ծառայողների գիտակցության բարձրացում ազգային փոքրամասնությունների իրավունքների և հակախտրականության օրենսդրության տեսանկյունից

- Տարածաշրջանային զարգացման և ենթակառուցյի նախարարության և Լեհաստանի տարածաշրջանային զարգացման նախարարության կազմակերպմամբ, երկրամասյին և մունիցիպալային կառուցվածքների ներկայացուցիչների համար անցկացվեց վարժանքների շարք: Հանրային աստիճանավորների որակավորման բարձրացման նպատակով, տարբեր միջազգային և ոչկառավարական կազմակերպություններ (*ECMI, GoE, UNDP, GTZ, Ռազմավարական հետազոտության կենտրոն, Ընտրական համակարգի զարգացման, ուսուցման և բարեփոխումների կենտրոն, պատանիների կրթության կենտրոն*) իրականացնում են կրթական ծրագրեր:

²⁴ http://www.justice.gov.ge/index.php?lang_id=&sec_id=106

Ազգային հայեցակարգի ուղղություն №2: Կրթություն և պետական լեզու

Գերակա խնդիր №2.1: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար նախադպրոցական կրթության մատչելիության ապահովում

Ազգային փոքրամասնությունների լուսավորական կարիքներին կողմնորոշված նախադպրոցական ուսումնական ծրագրերի պատրաստում և փորձարկում

2009 թվականի մարտի 31-ին կրթության և գիտության նախարարի հրամանով, հաստատվեց վրաց լեզվի ծրագիրը, որի շրջանակներում 2009 թվականից նախարարությունը իրականացնում է «*Նախադպրոցական կրթության աստիճանին վրաց լեզուն սովորելու օժանդակում ոչվրացալեզու տարածաշրջաններում*» ենթածրագիրը, ենթածրագրի նպատակն է ոչվրացալեզու տարածաշրջաններում վրաց լեզվի իմացության մակարդակի բարձրացում՝ նախադպրոցական տարիքի երեխաների համար որակյալ կրթական ծրագիր մատուցելու ճանապարհով:

*Կրթության և գիտության նախարարության*²⁵ ազգային փոքրամասնությունների լուսավորական կարիքներին կողմնորոշված նախադպրոցական ուսումնական ծրագրի շրջանակներում փորձագետների խումբը (որը կազմվում է վրացերենի, որպես երկրորդ լեզվի փորձագետներից, նախադպրոցական կրթության փորձագետից և պատկերազարդողից) մշակեց դասագրքի կառուցվածքը և առաջին մասը: Դասագրքի երկրորդ մասի ավարտումը և փորձարկումը պլանավորված է 2011 թվականին և այն իրականացնելու է *ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնը*²⁶:

Քվեմո Քարթլիի և Մամգիսե Ջավախեթի վեց մունիցիպալիտետում (Դմանխիսի, Բոլնիսի, Մառնեուլի, Ախալցխիսե, Ախալքալաքի, Նինոծմինդա) ընտրվեցին դպրոցներ, որտեղ նախադպրոցական կրթության կենտրոնի ստեղծման համար սենյակները սարքավորվեցին համապատասխան գույքով և ուսումնադաստիարակչական նյութերով: Նախագծի իրականացման գործում *ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնին օգնություն է ցուցաբերում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը*²⁷:

²⁵ <http://mes.gov.ge/>

²⁶ <http://www.ncac.ge/> ; <http://ganatleba.org/>

²⁷ <http://www.unicef.org/georgia/> ; <http://www.ungeorgia.ge/geo/UNICEF.php>

Գերակա խնդիր №2.2: Օժանդակություն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջնակարգ կրթություն ստանալուն

1. Դասագրքերի թարգմանություն ազգային փոքրամասնությունների լեզուներով

Ոչվրացալեզու դպրոցների համար շարունակվում է *ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի կողմից* գրիֆ տրված դասագրքերի թարգմանությունը հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով, թարգմանվել են դասագրքեր I, II, III, VII, VIII, IX, XI, XII դասարանների համար: 2011-2012 ուսումնական տարվա համար ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանվում են 4-րդ և 10-րդ դասարանների հետևյալ դասագրքերը բնագիտությունից (Բնություն, Կենսաբանություն, Ֆիզիկա) և արվեստաբանական առարկաներից և մաթեմատիկայից, թարգմանությունն ավարտվեց 2011 թվականի հունվարին: Այդպիսով, դասագրքերի էջկապման (գրքի շարվածքը երեսների բաժանման) և հրատարակման համար մնում է մոտավորապես 8 ամիս:

2009-2010 ակադեմիական տարում *«Ոչվրացալեզու սեկտորների աշակերտների դասագրքերի մատչելիության բարելավման ենթաձրագրի»* շրջանակներում, Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը հոգաց պատմության և աշխարհագրության երկլեզու դասագրքի անվճար բաժանումը VII, VIII, X, XI, XII դասարանների աշակերտներին, ինչպես նաև *«Վրացերենի, որպես երկրորդ լեզվի դասագիրքը»* անվճար բաժանվեց բոլոր ոչվրացալեզու դպրոցների I-IV դասարանների սովորողներին: Այս ենթաձրագրի բյուջեն կազմում էր 639,210 լարի, դրանում ընդգրկված աշակերտների թիվը 35,874 է, իսկ դասագրքերի թվաքանակը՝ 75,895 միավոր:

2. Մուլտիլինգվային (բազմալեզու) ուսուցման քաղաքականության կատարելագործում, փորձարկում և արմատավորում

2010 թվականին կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվեց *«Մուլտիլինգվային ուսուցման օժանդակության ծրագիրը»*²⁸: Ծրագրի շրջանակներում մշակվեցին և հաստատվեցին մուլտիլինգվային կրթության ծրագրերի դրույթը, գրանցման մեխանիզմները և միասնականացված ապրիկացիոն ձևը: Դրույթին համապատասխան, Վրաստանի կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվեց և հաստատվեց *մուլտիլինգվային կրթության խորհուրդ*, որի աշխատանքին

²⁸ <http://mes.gov.ge/content.php?t=srch&search=Մուլտիլինգվային&id=547&lang=geo> ;
<http://mes.gov.ge/content.php?t=srch&search=Մուլտիլինգվային&id=1213&lang=geo>

ընդգրկված է *ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնը*: Նշված խորհրդի կողմից ապահովվեց հանրակրթական հաստատությունների կողմից ներմուծված մուլտիլինգվային կրթության ծրագրերի քննարկումը և հաստատումը:

2010 թվականին դպրոցների աջակցության նպատակով Թբիլիսիում, Մառնեուլիում և Ախալքալաքում անցկացվեց մուլտիլինգվային կրթության մասին երեք տարածաշրջանային սեմինար (180 մասնակից), պատրաստվեց և հրատարակվեց մուլտիլինգվային կրթության մեթոդաբանական ֆիլմի՝ «Սովորում ենք մի քանի լեզուներով» աուդիո-տեսա տարբերակը, որը թարգմանվեց ադրբեջաներեն, հայերեն, ռուսերեն, անգլերեն և ուկրաիներեն լեզուներով:

Մուլտիլինգվային ուսուցման օժանդակության ծրագրի շրջանակներում և փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ-ի գերագույն կոմիսարի աջակցությամբ, ուսուցիչների և մարզիչների համար ստեղծվեցին մուլտիլինգվային ուսուցման մեթոդոլոգիական ռեսուրսներ (ուսուցիչների մուլտիլինգվային ուսուցման ուղեցույց և մուլտիլինգվային կրթության վարժանքների մոդուլ) և դրանց հրատարակումը պլանավորվում է եկող տարի:

Հաշվետու ժամանակաշրջանում սկսվեց 40 պիլոտային դպրոցի գրանցումը, ստեղծվել է խորհուրդ, որը կատարում է դպրոցների կողմից ներկայացված ապիկացիաների քննարկում և հաստատում:

Մուլտիլինգվային ծրագրի շրջանակներում նշանակալից միջոցառում էր նախարարության կողմից 40 պիլոտային (փորձարկու) դպրոցների նպատակային սուբսիդներ (դրամական նպաստներ) տալը (որը ծախսվեց ծրագրում ընդգրկված ուսուցիչների աշխատավարձի հավելմանը): Նույնպես նախարարության կողմից ծրագրի արդյունավետ արմատավորման նպատակով, 40 պիլոտային դպրոցների տարբեր առարկայական խմբեր ապահովվեցին դիտողական նյութերով:

Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի աջակցությամբ, USAID-ի ծրագրի շրջանակներում, *մուլտիլինգվային կրթության ծրագրի* շրջանակներում ընտրված պիլոտային դպրոցներին (40 դպրոց) փոխանցվեցին օժանդակ նյութեր՝ հեռուստացույցեր, DVD-հարմարանքներ և վրացական գեղարվեստական և անիմացիոն ֆիլմերի հավաքածուներ:

3. Ազգային փոքրամասնությունների լեզուներով կրթություն ստանալու ապահովում

Վրաստանի տարածքում գործող հանրային դպրոցների ընդհանուր թվաքանակից (ընդհանուր առմամբ 2,131 հանրային դպրոց) 350 պատկանում է ազգային փոքրամասնությունների դպրոցներին. 89 ադրբեջանական, 12 ռուսական, 116 հայկական և 133 խառը (երկու կամ ավելի լեզվական սեկտորով): Նշված դպրոցներից 40 դպրոց ընդգրկված է Վրաստանի կրթության և գիտության նախարարության մուլտիլինգվային կրթական ծրագրում:

2010 թվականի ազգային ուսումնական օլիմպիադան անցկացվեց հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն: Երրորդ փուլի հիման վրա բացահայտվեցին հաղթանակած աշակերտները, այդ թվում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ:

2010 թվականին կրթության և գիտության նախարարության «Փոքրամասնությունների լեզվի պաշտպանության ենթաձրագրի» շրջանակներում ապահովվեց 11-րդ հանրային դպրոցի բազայի վրա գործող օսական կիրակնօրյա դպրոցի ֆինանսավորումը: Օսական կիրակնօրյա դպրոցում աշակերտները հնարավորություն ունեն սովորելու օսական լեզուն, մշակույթը, պատմությունը, բանահյուսությունը, կովկասյան պարեր և երգեր:

Գերակա խնդիր №2.3: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության բարելավում

Բարձրագույն ուսումնական հաստատություններում նախապատրաստական-ինտեգրման դասընթացի արմատավորում

- 2010-2011 ուսումնական տարում սկսվեց 2009 թվականի նոյեմբերին բարձրագույն կրթության օրենքում մտցված այն փոփոխությունների գործնական իրականացումը, ինչը ազգային փոքրամասնությունների դիմորդներին պետական ուսումնական հաստատություններ հանձնելու համար նախատեսում է քվոտների համակարգի կիրառում: Պետական բարձրագույն ուսումնարանները պարտավոր են ընդունելության տեղերի ընդհանուր թվաքանակի 5-5% հատկացնել ադրբեջանալեզու և հայալեզու ուսանողների համար: Համանման մոտեցումը աբխազ և օս ուսանողների վրա (1-1%) կտարածվի 2012-2013 ուսումնական տարվանից: Դիմորդները, որոնցից կպահանջվի միակ քննության՝ ընդհանուր ունակությունների թեստի հանձնում մայրենի լեզուներով, բարձրագույն ուսումնական հաստատություններում կհաշվարկվեն վրաց լեզվի նախապատրաստության ինտենսիվ կուրսում: Օրենսդրությամբ երաշխավորված արտոնյալ քաղաքականության

համաձայն, մեկ քննության հանձնումը տարածվում է միայն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների վրա, մյուս դիմորդները բարձրագույն ուսումնարանների 2010 թվականի ընդունելության մրցույթում քննություն հանձնեցին չորս առարկաներից: Լեզվի մեկամյա նախապատրաստական դասընթաց անցնելուց և 60 վարկ հավաքելուց հետո, ուսանողները ուսումը շարունակում են իրենց կողմից ընտրված կրթական ծրագրով:

- 2010 թվականի միասնական ազգային քննություններում, ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու և հայալեզու թեստերի արդյունքների հիման վրա, Վրաստանի լիազորագրված բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումը շարունակելու իրավունք ձեռք բերեց.
 - ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու թեստի հիման վրա՝ 178 դիմորդ,
 - ընդհանուր ունակությունների հայալեզու թեստի հիման վրա՝ 123 դիմորդ:

2010 թվականի միասնական ազգային քննություններից միայն ընդհանուր ունակությունները ադրբեջանալեզու և հայալեզու թեստերի արդյունքների հիման վրա պետական ուսումնական դրամաշնորհով ֆինանսավորվեց.

- ընդհանուր ունակությունների ադրբեջանալեզու թեստի հիման վրա՝ 101 դիմորդ,
 - ընդհանուր ունակությունների հայալեզու թեստի հիման վրա՝ 112 դիմորդ:
- 2010 թվականի միասնական ազգային քննությունների նախապատրաստական ժողովածուն հրատարակվեց ազգային փոքրամասնությունների լեզուներով, մասնավորապես՝
 - ա) ընտրովի առարկաներից՝ ռուսերեն,
 - բ) ընդհանուր ունակություններից՝ ռուսերեն, ադրբեջաներեն և հայերեն:
 - Հուլիսի 7-8-ին անցկացվեցին ընդհանուր մագիստրային քննություններ վրացերեն և ռուսերեն լեզուներով: Նույնպես հրատարակվեց 2010 թվականի ընդհանուր մագիստրային քննությունների նախապատրաստական ժողովածու՝ ռուսերեն:
 - Փետրվարի 24-ին, *վերին տեղուման հարցերով պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ, քննությունների ազգային*

*კენსტონი*²⁹ ներկայացուցի հետ միասին պլանավորվեց հանդիպում. այն նախապատրաստվեց և հաջողությամբ անցկացվեց Քվեմո Քարթլիի ք. Մառնեուլիի մշակույթի տանը, ադրբեջանալեզու և հայալեզու դպրոցների ավարտական դասարանների աշակերտների հետ: Կախերթի երկրամասային ադմինիստրացիայի ներկայացուցիչների օգնությամբ հանդիպմանը մասնակցեցին նաև Կախերթի տարածաշրջանի Իորմուղանլո և Լամբալո գյուղերի ադրբեջանական հանրային դպրոցների սովորողները: *Քննությունների ազգային կենտրոնի* ներկայացուցիչը ապագա դիմորդներին ծանոթացրեց կրթության օրենքում մտցված փոփոխությունների հետ: Ապագա դիմորդներին պարզաբանվեցին հայց մտցնելու անհրաժեշտ ընթացակարգերը:

- *Կախերթի տարածաշրջանում, Թելավի պետական համալսարանում* գործում են վրաց լեզվի ուսուցման դասընթացներ ոչվրացի դիմորդների և երիտասարդության համար:

Գերակա խնդիր №2.4: Պետական լեզվի ուսուցման օժանդակություն

1. Ոչվրացալեզու դպրոցներում վրացերենի, որպես երկրորդ լեզվի, ծրագրի արմատավորում

Նոր ազգային ուսումնական պլանի շրջանակներում ավարտվեց *վրացերենի, որպես երկրորդ լեզվի առարկայական ծրագրի*³⁰ մշակումը: Նշված փաստաթուղթը քննարկման ներկայացվեց հոծ բնակեցված տարածաշրջանների (հունիսի 30-ին՝ Ախալցխեում, Մամցխե-Ջավախերթի բոլոր վեց մունիցիպալիտետների մանկավարժներին, իսկ հուլիսի 1-ին՝ Ռուսթավում, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի) ոչվրացալեզու ուսուցիչներին:

2010-2011 ուսումնական տարում ոչվրացալեզու դպրոցների չորրորդ դասարանում արմատավորվեց վրաց լեզվի ուսուցում թարմացված ազգային ուսումնական պլանի առարկայական ծրագրի համաձայն:

Ոչվրացալեզու դպրոցների և սեկտորի 4-րդ դասարանի աշակերտների համար մշակվեց և հրատարակվեց վրացերենի, որպես երկրորդ լեզվի դասագիրքը:

Պետական լեզվի ուսուցման որակի բարելավման նպատակով, վրացերենի, որպես երկրորդ լեզվի 340 ուսուցիչների անցկացվեց լեզվի տիրապետման մակարդակի ստուգման թեստ: Թեստավորումն անցկացվեց ողջ Վրաստանի

²⁹ <http://www.naec.ge/>

³⁰ http://www.tpdс.ge/index.php?option=com_content&view=article&id=47&Itemid=103

მასუზთაფრძლ რნჟჰანორ ათმამრ 7 კენსორნონომ (Ախაլგჰჰსე, Ախაլքაլაქჰ, Նჰინძომჰინჟა, Մათნեուլჰ, Գարդაբանჰ, Ծալკა և Թբჰიլჰսჰ):

Փոխհամաձայնության մեմորանդումի հիման վրա, *ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնը*³¹ *ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը*³² հետ համատեղ սկսեց ուսուցիչների վաուչերային ծրագրի իրականացումը վրացերենի, որպես երկրորդ լեզվի ուսուցիչների համար: Պատրաստվեցին լեզվի ուսուցման գործնական դասընթացներին համապատասխան վարժանք-ծրագրեր ոչվրացալեզու ուսուցիչների համար և ընտրվեցին վարժանքներ իրականացնող կազմակերպությունները, որոնց համար տեղական և արտասահմանյան կոնսուլտանտների կողմից անցկացվեցին պատշաձ վարժանքներ:

2. Դեռահասների և չափահասների պետական լեզու սովորելուն օժանդակության ծրագրեր (Չափահասների կրթության կենտրոններ)³³

Ախալքալաքում և Նինոծմինդայում 2007 թվականից գործում են չափահասների կրթության կենտրոններ՝ «Լեզվի տներ» ուսուցիչների, հանրային աստիճանավորների, զինվորականների, բժշկական և սոցիալական աշխատողների, փոքր բիզնեսում ընդգրկված մարդկանց և այլ սոցիալական խմբերի համար: «Վրաց լեզվի ծրագրի» շրջանակներում 2009 թվականին վրաց լեզվի կենտրոններ ստեղծվեցին նաև Քվեմո Քարթլիի տարածաշրջանում (Դմանխում և Բոլնխում):

2011 թվականին Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը հատկացնում է գումարներ Նինոծմինդայում և Ախալքալաքում «Լեզվի տների» ֆինանսավորման համար: Դրա հետ միասին գումարներ հատկացվեցին նաև Դմանխի և Բոլնխի վրաց լեզվի կենտրոններին (30.000 լարի՝ յուրաքանչյուր կենտրոնի համար, ինչը 2009 թվականի բյուջեի համեմատությամբ կրկնակի անգամ ավելի է): Առ այսօր յուրաքանչյուր կենտրոն ունի աշակերտների 6 խումբ (վերը նշված կենտրոնների ֆինանսավորմանը հատկացված գումարը կազմում է 120.000 լարի):

3. Ծրագիր. «Որակյալ վրաց լեզվի մասնագետներ ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների դպրոցներում»

Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնն իրականացնում է «Որակյալ վրաց լեզվի մասնագետներ ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների դպրոցներում»³⁴

³¹ <http://www.ncac.ge/>

³² <http://www.tpdс.ge/>

³³ <http://mes.gov.ge/content.php?id=547&lang=geo>

³⁴ http://www.tpdс.ge/index.php?option=com_content&view=article&id=47&Itemid=103

պետական ծրագիրը, ինչը նախատեսում է վրաց լեզվի և գրականության որակյալ ուսուցիչների գործուղում Մամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ազգային փոքրամասնություններով բնակեցված գյուղերի այն ոչվրացալեզու դպրոցները, որտեղ առանձնապես սուր է դրված վրաց լեզվի իմացության և ուսուցման հարցը. վրաց լեզվի և գրականության ուսուցիչների մոտավորապես 30% իրենք չեն տիրապետում հաղորդակցական վրացերենին:

2009-2010 թվականներին, նախարարության կողմից անցկացված բաց մրցույթին մասնակցեց շուրջ 800 անձնավորություն, դրանցից հաջողությամբ թեստավորում և հարցազրույց անցավ միայն 64 ուսուցիչ: Նորընտիր մարզիչ-ուսուցիչները ժամային վարձատրությունից բացի, պետական ծրագրից ստանում են աշխատավարձ 1.000 լարիի չափով (եռակի անգամ ավելի, քան ուսուցչի միջին աշխատավարձն է): Նրանք անցնում են պարտադիր վարժանքներ հետևյալ դիսցիպլիններից. «Վրացերենի, որպես երկրորդ լեզվի ուսուցման մեթոդիկա», «Ազգային և կրոնական հանդուրժողականություն» և ադրբեջանական կամ հայոց լեզու սովորելու արագացված դասընթաց և միայն դրանից հետո բաշխվում են Մամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ազգային փոքրամասնություններով բնակեցված գյուղերում: Մրանից ելնելով, նոր ժամանած մարզիչ-ուսուցչից պահանջվում է տեղական լեզվի գոնե տարրական մակարդակի իմացություն: Ծրագրին մասնակցող ուսուցիչները դպրոցներում վրաց լեզվի և գրականության դասավանդմանը զուգահեռաբար, անց են կացնում վարժանքներ ուսուցիչների համար, կազմակերպում են տարբեր միջոցառումներ, որոնց նպատակը համայնքում վրաց լեզվի ուսուցման մոտիվացման բարձրացումն է և պետական ծրագրում ընդգրկվածության ավելացումը: Մարզիչ-ուսուցչի եռամսյակային հաշվետվությունից պարզվում է, որ 2010 թվականին ծրագրում ընդգրկված էր մինչև 6.000 աշակերտ և վարժանք անցկացվեց 500 տեղական ուսուցչի:

Ուսումնական գործընթացը արդյունավետ վարելու համար *ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը* նախագծում ընդգրկված դպրոցներին հանձնեց անհրաժեշտ գույք, աուդիո-տեսա սարքավորանք, ուսումնական դիտողական նյութ և գրասենյակային իրեր:

2010 թվականին ծրագրին ընդգրկված բոլոր դպրոցներում պլանավորվեց և իրականացվեց «*Մամառային դպրոցի*» *նախագիծը*: Ուսուցիչները նախապես ձևավորեցին աշակերտական խմբեր և հուլիս ամսին ազատ ռեժիմով (խաղի, էքսկուրսիաների, միջոցառումներ անցկացնելու ճանապարհով) շարունակեցին վրաց լեզվի դասավանդումը: 2011-2014 թվականներին պլանավորված է ամառային դպրոցների մասշտաբների ընդլայնում և ավելի շատ աշակերտների և ուսուցիչների ընդգրկում արտագնա ճամբարների նախագծերում: Նշված ծրագիրը իրականացվում է հետևյալ

մունիցիպալիտետներում. Ախալքալաքի, Նինոծմինդա, Ծակա, Բոլնիսի, Դմանիսի, Գարդաբանի, Մառնեուլի, Սագարեջո և դրա բյուջեն 2010 թվականին կազմում էր 773,000 լարի:

2010-2014 թվականներին պլանավորված է ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում արհեստավարժ վրաց լեզվի և գրականության ուսուցիչների թվաքանակի աճ և ավելի շատ գյուղերի ընդգրկում նշված պետական ծրագրում:

4. *Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան հարաբերությունների կենտրոն» ոչկառավարական կազմակերպության հետ համատեղ թարգմանեց և Քվեմո Քարթլիում և Սամցխե-Չավախեթիում բաժանեց «Ուսուցման և զարգացման տեսություններ» և «Ուսուցում և գնահատում» հրապարակումների 1,290 օրինակ: Նշված հրապարակումները³⁵ ներկայացնում են ուսուցիչների օժանդակ ձեռնարկներ, որոնց նպատակն է օգնել ուսուցիչներին սերտիֆիկացիոն (արտոնագրման) քննություններին նախապատրաստության և մանկավարժական պրակտիկայի բարելավման գործում:*

5. *Կախեթի տարածաշրջանում, Թելավի պետական համալսարանի վրաց լեզվի և գրականության ամբիոնի բազայի վրա անցկացվեց մի քանի հատուկ վարժանք վրաց լեզվի ուսուցման մեթոդիկայի հարցերով Թելավի և Կախեթի այլ մունիցիպալիտետների հանրային դպրոցների ուսուցիչների համար:*

Գերակա խնդիր №2. 5: Կրթության ոլորտում հանրային բանավեճերի և քաղաքացիական ինտեգրման օժանդակում

Կախեթի տարածաշրջանում, Թելավի պետական համալսարանում³⁶, բացվեց կովկասյան հիմնախնդիրների հետազոտման կենտրոն, որի աշխատակիցները աշխատում են Կախեթի երկրամասում ազգային և էթնիկական փոքրամասնությունների (ինչպիսիք են քիստեր, ուդիներ, ադրբեջանցիներ, ռուսներ, օսեր, ավարիացիներ, գնչուներ և այլն) հիմնախնդիրների վրա: Կենտրոնի արդեն անցկացրած միջոցառումներին ակտիվորեն մասնակցում են երկրամասային ադմինիստրացիայի, մունիցիպալիտետների վարչությունների, երկրամասի իրավապահ, ոչկառավարական և այլ կառույցների աշխատակիցներ:

³⁵ http://www.tpdg.ge/index.php?option=com_content&view=article&id=16&Itemid=63

³⁶ <http://tesau.edu.ge/>

Ազգային հայեցակարգի ուղղություն №3.
Լրատվամիջոցներ և լրատվության մատչելիություն

Գերակա խնդիր №3.1: Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում ազգային հաղորդման մատչելիության ապահովում

Հանրային հեռարձակումը³⁷ ազգային ալիքներից (I և II) բացի, փոքրամասնությունների լեզուներով պատրաստված ծրագրերը տարածում է նաև տարածաշրջանային հեռուստաընկերությունների եթերով:

«Մոամբեն» աբխազերեն հաղորդվում է «*Երկրորդ ալիքի*» եթերում, ամեն օր ժամը 23.00 –ին և առավոտյան ժամը 07.00-ին: Կրկնվում է «*Առաջին ալիքի*»³⁸ եթերով: Նույնպես ամեն օր հաղորդվում է «*Օդիշի*» (*Չուգդիդի*) հեռուստաընկերության կողմից: Ազդանշանը տարածվում է միայն Աբխազիայի Գալիի շրջանում: Մնացած այլ տարածաշրջաններում «Մոամբեն» աբխազերեն դիտում են նրանք, ովքեր ունեն արբանյակային ազդանշանը ընդունելու ալեհավաքներ:

«Մոամբեն» օսերեն հաղորդվում է «*Երկրորդ ալիքի*» եթերում, ամեն օր, ժամը 23.00 –ին և առավոտյան ժամը 07.00-ին: Կրկնվում է «*Առաջին ալիքի*» եթերով: Նույնպես ամեն օր հաղորդվում է «*Թրիալեթի*» (*Գորի*) հեռուստաընկերության կողմից: Ազդանշանը տարածվում է ողջ Յիսինվալի տարածաշրջանի վրա Ախալգորիի շրջանից բացի:

«Մոամբեն» հայերեն հաղորդվում է «*Երկրորդ ալիքի*» եթերում, ամեն օր ժամը 23.00 –ին և առավոտյան ժամը 07.00-ին: Կրկնվում է «*Առաջին ալիքի*» եթերով: Նույնպես ամեն օր հաղորդվում է *ATB 12* (*Ախալքալաքի*) հեռուստաընկերության կողմից: Սեփական նախաձեռնությամբ «Ազգային Մոամբենին» եթեր է տրամադրում «*Փարվանա*» (*Նինոծմինդա*) հեռուստաընկերությունը:

«Մոամբեն» ադրբեջաներեն հաղորդվում է «*Երկրորդ ալիքի*» եթերում, ամեն օր ժամը 23.00 –ին և առավոտյան ժամը 07.00-ին: Կրկնվում է «*Առաջին ալիքի*» եթերով: Նույնպես ամեն օր հաղորդվում է «*Մառնեուլի*» (*Մառնեուլի*) հեռուստաընկերության կողմից:

Գերակա խնդիր №3.2: Ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների ծրագրերի մատչելիության ապահովում

Հանրային հեռարձակման կողմից ազգային և էթնիկական

³⁷ <http://www.gpb.ge/Default.aspx?LangID=1>

³⁸ <http://www.1tv.ge/Default.aspx?LangID=1>

փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունները հաստատեցին, որ ցերեկվա ժամերին շաբաթական մեկ անգամ, իրենց մայրենի լեզուներով հաղորդումները չէին առաջացնում հեռուստադիտողի առանձնահատուկ հետաքրքրությունը, դրա պատճառ անվանվեց հաղորդումների ոչդիտումնային ժամանակը (14:30 ժամ.), ինչպես նաև դրանց ոչինտենսիվ պարբերականությունը (շաբաթական մեկ անգամ): Այն բանի հաշվառումով, որ ցերեկվա ժամերին արխազական, օսական, հայկական և ադրբեջանական լեզուներով հաղորդումների պոտենցիալ հեռուստադիտողի մեծամասնությունը ազատ չէ հաղորդում դիտելու համար, ներկայացված հեռուստատեսային արտադրանքը չէր հասնում ցանկալի արդյունքի: Այդ կապակցությամբ *հանրային հեռարձակումը* 2010 թվականի մարտի 1-ից իրականացրեց բարեփոխում հաղորդման ծավալի և արդյունավետության ավելացման նպատակով, սկսվեց նոր լուրերի տարածում տարբեր լեզուներով այն տարածաշրջանային հեռուստատեսությունների միջոցով, որոնք ծածկում են ազգությամբ արխազ, օս, ադրբեջանցի և հայ քաղաքացիներով հոծ բնակեցված երկրի անկյունները:

Խմբագրությունների կողմից պատրաստվում է օրվա նորությունների ամբողջական տեղեկատվական լրահավաք (տևողությունը՝ 40 րոպե), չորս լեզուներով՝ հայերեն, ադրբեջաներեն, արխազերեն և օսերեն: Այս լրատվական բլոկը ամեն օր հաղորդվում է նաև տարածաշրջանային հեռուստալիքներին Ախալքալաքում, Մառնեուլիում, Գորիում և Զուգդիդում, միևնույն ժամանակ գործընկեր տարածաշրջանային հեռուստալիքներն իրավունք ունեն լրացուցիչ կրկնել հաղորդումները առավոտյան և երեկոյան ժամերին: Բացի դրանից, տարածաշրջանային հեռուստարձևությունները նույնպես ունեն տեղական խմբագրությունների պատրաստած սյուժեները հեռարձակմանը առաջարկելու հնարավորություն: 2010 թվականի մարտի 1-ից սկսված *«Ազգային Մոսմբե»-ի* տարբեր լեզուներով ամենօրյա հեռարձակումը առաջացրեց նպատակային լսարանի մեծ հետաքրքրությունը: Այսօր ազգային փոքրամասնությունների խմբագրություններն ունեն հնարավորություն իրենք պատրաստեն ռեպորտաժներ իրենց հետաքրքրող թեմաներով: Ներկայումս հանրային հեռարձակման ռադիոէթերում հաղորդվում է *«Ազգային Մոսմբե»-ի* նոր լուրերի լրահավաքի աուդիոտարբերակը: Արխազերեն, օսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով լրատվական թողարկումներին ավելացան նաև ռադիոծրագրեր քրդական լեզվով: Փոքրամասնությունների լեզուներով ռադիո հաղորդումները ընթանում են նաև *«Առաջին ռադիոյի»* էթերով:

2010 թվականի նոյեմբերի 18-19-ին կայացավ *հանրային հեռարձակման ազգային փոքրամասնությունների խմբագրությունների* և

տարածաշրջանային հեռուստաընկերությունների արտակարգ հանդիպում: Այս երկօրյա աշխատանքային հանդիպմանը, թեմատիկ զեկուցումների հետ միասին կայացավ բանավեճ հետևյալ թեմատիկայով՝ որքանով դիտելի են տեղական հեռուստատեսության հաղորդումները, քանի հեռուստադիտող ունեն տարածաշրջանային հեռուստատեսությունները ընդհանուր առմամբ և դրանց շրջանում քանիսն է ազգային փոքրամասնության ներկայացուցիչ, ինչ տեխնիկական բազա ունեն:

2010 թվականի հունվարի 25-ին եթեր դուրս եկավ „ПИК“³⁹ նոր ռուսալեզու հեռուստաալիքը, որը հեռարձակվում է սատելիտային կապի միջոցով: Այս ալիքի հիմնական թիրախային լսարանը ներկայացնում են կովկասյան ժողովուրդները, որոնք ամենօրյա լրատվական թողարկումներից կստանան օբյեկտիվ տեղեկություններ, հեռուստաալիքի եթերով արդեն թողարկվում են ժամանակակից փաստագրական ֆիլմեր, բանավեճային «թոք-շոուներ» և հեռուստա-ամսագրեր, հետաքրքիր զրույցներ պատմության և արվեստի թեմաներով:

Գերակա խնդիր №3.3: Հաղորդումների ծրագրերում ազգային փոքրամասնությունների լուսաբանության և մասնակցության ապահովում

Փետրվարի 24-ին ժողովրդական պաշտպանը և ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհուրդը հանդիպեցին հանրային հեռարձակման գլխավոր տնօրենի հետ. հանդիպմանը քննարկվեց ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդման նոր նախագիծը:

- Թոք-շոու «Մեր բակը»⁴⁰

«Մեր բակը» թոք-շոուի նպատակային լսարանը միայն ազգային փոքրամասնություններով չի սահմանափակվում: Հաղորդումը եթեր է դուրս գալիս վրացերեն և նրա նպատակն է լայն լսարանին հաղորդել լրատվություն Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակույթի, ավանդույթների և նրանց այսօրվա կենցաղի մասին:

- Հեռուստակամուրջ «Թբիլիսի-Բաքու»⁴¹

³⁹ <http://pik.tv/ru>

⁴⁰ <http://www.1tv.ge/Show-Home.aspx?LangID=1&Location=14>

⁴¹ <http://www.1tv.ge/Show-Home.aspx?LangID=1&Location=114>

Հանրային հեռարձակումը պարբերաբար կազմակերպում է հեռուստակամուրջներ Թբիլիսիի և Բաքվի միջև, ինչը նպատակամղված է երկու երկրների միջև հարաբերությունների հետագա խորացմանը: Ապրիլի 29-ին Վրաստանի և Ադրբեջանի հանրային հեռարձակումների կողմից կազմակերպվեց հեռուստակամուրջ: Ձրույցը վերաբերեց երկու երկրների համագործակցությանը ոչկառավարական սեկտորում: Այս հեռուստակամուրջը մեծ հետաքրքրություն առաջացրեց երկու երկրների հեռարձակումների մոտ, այս հետաքրքրությունների հաշվառումով նախագծին տրվեց սիստեմատիկ բնույթ: Նոյեմբեր-դեկտեմբերին անցկացվեց ևս երկու հեռուստակամուրջ՝ «*Հարևանները ավելի լավ պետք է ճանաչեն միմյանց*» և «*Երկու երկրների տնտեսական համագործակցություն*» թեմաներով:

Գերակա խնդիր №3.4: Ազգային փոքրամասնությունների լեզուներով էլեկտրոնային և տպագիր լրատվամիջոցների օժանդակում

*Մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության*⁴² աջակցությամբ լույս տեսան «Վրաստան» և «Գյուրջիստան» թերթերի համարներ: Հայալեզու և ադրբեջանալեզու թերթերի հրատարակումը նպաստում է Վրաստանում բնակվող ադրբեջանցիների և հայերի իրազեկվածության բարձրացմանը և նրանց ինտեգրմանը վրաց մշակութային տարածքին: Յուրաքանչյուր թերթի հրատարակության համար նախարարությունն իր բյուջեից հատկացրեց 15,000 լարի, դրա հետ միասին Վրաստանի նախագահի կարգադրությամբ, «Վրաստան» և «Գյուրջիստան» թերթերի գործունեությունը ֆինանսավորելու նպատակով, Վրաստանի նախագահի պահուստային հիմնադրամից լրացուցիչ հատկացվեց 60,000 լարի, նշված գումարը հավասարաչափ բաժանվեց այս երկու թերթերին աջակցության համար: Նշված հայալեզու և ադրբեջանալեզու պարբերական հրատարակությունները 2010 թվականին համապատասխանաբար, ֆինանսավորվեցին նախարարության կողմից, յուրաքանչյուրին՝ 45,000 լարիի չափով:

Գերակա խնդիր №3.5: Լրատվամիջոցներում հանդուրժողականության և մշակութային պլուրալիզմի արմատավորման օժանդակում

- «Մեր բակը» հաղորդումը եթերում է ամեն կիրակի օր: Ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի կողմից, «Մեր բակը» հաղորդումը պարզևատրվեց որպես «2010 թվականի լավագույն հանդուրժողական հաղորդում»: Հանրային հեռարձակման եթեր հաղորդումն առաջին անգամ դուրս եկավ 2007

⁴² <http://www.mcs.gov.ge/>

թվականի հունիսի 2-ին: Դրանից հետո 2010 թվականի հուլիսը ներառյալ ընդհանուր առմամբ պատրաստվել է 88 հաղորդում: Անմիջականորեն 2009 (դեկտեմբեր)-2010 (դեկտեմբեր) թվականների հեռուստատեսային սեզոնում էթեր դուրս եկավ 32 հաղորդում, միայն դեկտրների համար 2010 թվականին ծախսվել է 33,120 լարի (Ֆինանսավորվել է *USAID/UNAG ծրագրի շրջանակներում*): *Լուսաբանվել է բազմաթիվ հետաքրքիր թեմա՝ Կովկասյան տուն, ճանապարհների վերականգնման ծրագիր, ֆոտոարվեստ, մասնագիտական կրթության նոր ծրագիր: Եթեր դուրս եկավ նաև հաղորդում, որը նվիրվեց Յիսինվալի և Սուխումի թատրոնների գործունեությանը:*

- *Հանրային հեռարձակման քրդական խմբագրության նախաձեռնությամբ ստեղծվեց կայք-էջ www.kurd.ge, որը ինտեռնետ – սպառողներին հաղորդում է լրատվություն քուրդ փոքրամասնության ավանդույթների, մշակույթի և ժամանակակից կենցաղի մասին:*
- *Վրաստանի նախագահին առնթեր գործող ներողամտության և քաղաքացիական ինտեգրման խորհրդի և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի կողմից ստեղծվեց և պարբերաբար նորացվում է հատուկ էլեկտրոնային տվյալների բազան: Տվյալների բազան սպառողներին առաջարկում է լրատվություն Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմության և մշակույթի մասին:*

Հանրային հեռարձակման կողմից փոքրամասնությունների ծրագրերի համար 2010 թվականին ամբողջությամբ ծախսվել է 463,213 լարի:

**Ազգային հայեցակարգի ուղղություն №4:
Քաղաքական ինտեգրում և քաղաքացիական մասնակցություն**

Գերակա խնդիր №4.1: Ազգային փոքրամասնությունների հավասար ընտրական իրավունքի ապահովում

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովում (ԿՀՀ)⁴³ ստեղծվեց խոցելի կարգավիճակի ընտրողներին աջակցության աշխատանքային խումբ: Խմբի կազմի մեջ մտնում էին հանձնաժողովի անդամներ, ադմինիստրացիայի աշխատակիցներ, տեղական ոչկառավարական և կառավարական, ինչպես նաև Վրաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նշված խումբը 2010 թվականի ապրիլ-մայիս ամիսներին անցկացրեց 15 աշխատանքային հանդիպում, որոնց ժամանակ առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների ընտրողներին ընտրական իրավունքների մասին սպառիչ լրատվություն հաղորդելուն, նրանց ընդգրկմանը ընտրական գործընթացներին, նրանց ներկայացուցիչների կարծիքների կիսմանը: Նշված կարգավիճակի ընտրողների առավելագույն օժանդակության, նրանց իրազեկվածության և ընտրական գործընթացներին լիարժեք մասնակցության նպատակով, խումբը 2010 թվականի մայիսի 30-ի տեղական ինքնակառավարման ընտրությունների համար անվանեց և իրականացրեց հետևյալ միջոցառումները.

- պատրաստվեց և 9 ընտրատարածքի 314 տեղամասում փակցվեց հայերեն և ադրբեջաներեն թարգմանված ընտրողների միասնական ցուցակի առաջնային տարբերակը,
- պատրաստվեց, թարգմանվեց և տպագրվեց ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների ձեռնարկ-հրահանգը ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն,
- պատրաստվեց, թարգմանվեց և տպագրվեց քվեարկության օրվա հրահանգը՝ ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, որոնք բաժանվեցին բոլոր ոչվրացալեզու ընտրատարածքներում,
- պատրաստվեց, թարգմանվեց հայերեն և ադրբեջաներեն և փակցվեց ընտրատեղամասերում ընտրացուցակների վերջնական տարբերակը,
- պատրաստվեցին և տպագրվեցին ընտրական քվեաթերթեր վրաց-հայերեն և վրաց-ադրբեջաներեն լեզուներով,
- նույնպես ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով պատրաստվեց, տպագրվեց և տարածվեց ստորև թվարկված նյութերի շուրջ 100,000 օրինակ.
 - ձայն տալու հրահանգը,

⁴³ <http://www.cec.gov.ge/>

- ընտրական քվեաթերթերը լրացնելու կարգը,
- ձայն տալու ընթացակարգը արտացոլող պոստերներ,
- ֆլայերներ,
- «Ընտրողի հուշագիր» բուկլետը ,
- Թարգմանվեցին և տեղադրվեցին գովազդային օղակներ տարածաշրջանային հեռուստատեսությունների և ռադիո եթերներում, ազգային և էթնիկական փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում գործող լրատվամիջոցների էլեկտրոնային և տպագիր միջոցներում:

Ապրիլի 13-ին Վրաստանի ժողովրդական պաշտպանը և ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամները հանդիպեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի հետ: Հանդիպմանը քննարկվեց 2010 թվականի մայիսի 30-ի ինքնակառավարման ընտրություններում ազգային փոքրամասնությունների մասնակցության, ազգային փոքրամասնությունների համար ընտրական նյութերի թարգմանության, սպասարկման և ընտրություններին նրանց ընդգրկվածության հարցը:

Մի քանի միջազգային և տեղական ոչկառավարական կազմակերպություններ Թբիլիսիում և Սամցխե-Ջավախեթում ԿԸՀ-ի աջակցությամբ իրականացրին ոչլրացալեզու ընտրողներին օժանդակության և իրազեկման նախագծեր: Մասնավորապես, *ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (UNDP⁴⁴)*՝ - պոստերների և ֆլայերների թարգմանություն և տպագրություն, ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը (*IFES⁴⁵*)՝ - պոստերների և ֆլայերների թարգմանություն և տպագրություն. հայերեն, ռուսերեն և ադրբեջանալեզու գրություններով մայկաների պատրաստում:

Մ.Մելքոնյանի անվան հանդուրժողականության և ինտեգրման բարեգործական հիմնադրամի կողմից Ախալքալաքում և Նինոծմինդայում իրականացվեց նախագիծ, որը նախատեսում էր տեղական ոչլրացալեզու բնակչությանը լրատվական օգնության ցուցաբերում՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների պատրաստության և քվեարկության օրվա ընթացակարգերի մասին մանրամասն լրատվություն ստանալու համար: Նախագիծը իրականացվեց 22 մեծամասնական տարածքի և 21 գյուղի տարածքում: ԿԸՀ-ի կողմից պատրաստված լրատվական հոլովակները հայերեն հաղորդվում էին «*ATV-12*», «*Ջավախք*» և «*Փարվանա*» տեղական հեռուստատեսությունների եթերներով:

⁴⁴ http://undp.org.ge/index.php?lang_id=GEO&sec_id=40&pr_id=58

⁴⁵ <http://www.ifes.org/Search.aspx?search=ifes+in+georgia>

Ընտրական համակարգի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնը⁴⁶ Ախալքալաքի, Ախալցխისի և Նինոծմինդայի մունիցիպալիտետներում իրականացնում է հատուկ նախագիծ «Ազգային փոքրամասնությունների իրավական կրթության բարձրացման օժանդակություն՝ ժողովրդավարական ընտրությունների բովանդակության և կազմակերպչական յուրահատկությունների իմացության մեջ»: Նախագծի շրջանակներում ուսուցման դասընթաց է անցնում 920 մասնակից, ստեղծվեցին նաև ընտրական ռեսուրս-կենտրոններ:

